

ՎԱՅՐԱՄԱԲԵՐԴԵ ՈՐՊԵՍ ՄԱՐՄԱՇԵՆ ԶԱՂԱՔԻ ՄԻՋՆԱԲԵՐԴ

X-XI դարերում բազմադարյան ավանդույթներ ունեցող հայ ճարտարապետությունը կրկին բռնեց վերելքի ուղին: Այն դրսևորվում էր ոչ միայն եկեղեցաշինության, այլև քաղաքաշինության, ամրոցաշինության և դղյակաշինության ասպարեզում: Ամրոց-դղյակների կառուցման աշխատանքները ֆինանսավորվում և կազմակերպվում էին ինչպես արքունիքի, այնպես էլ ավատական խոշոր ընտանիքների կողմից, որոնք քաջ գիտակցում էին երկրի անվտանգության և հետագա հարատևման համար պաշտպանական ամրությունների կառուցման բացառիկ նշանակությունն ու կարևորությունը: Այդ պատվաբեր աշխատանքներից անմասն չմնացին նաև եկեղեցաշինության ասպարեզում քրծված Պահլավունի վսեմաշուք տոհմի լուսապայծառ այրերը, որոնք, լայն բացելով իրենց քսակները, անմնացորդ նվիրվեցին հայրենիքի պաշտպանության և անվտանգության վեհ գործին:

Պահլավունիների կառուցած մի շարք ամրոցների (Բջնի, Ամբերդ) կողքին դեռևս քերի է ուսումնասիրված Վահրամաբերդը: Ուստի, մեր նպատակն է ձեռագիր հիշատակարանների, գիտական գրականության և մասնագիտական ամսագրերում հրատարակված հոդվածների հիման վրա լուսաբանել և ամբողջացնել այդ կարևորագույն հուշարձան-հնավայրի պատմությունը և ցույց տալ վերջինիս Մարմաշեն քաղաքի միջնաբերդ լինելը:

Երբեմնի միջնադարյան ռազմապաշտպանական համալիրը գտնվում է Գյումրի քաղաքից մոտ 8 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք տեղակայված Մարմաշեն (Վերին Ղանլիջա) գյուղի հյուսիսարևմտյան ծայրանասում վեր խոյացող բլրի վրա՝ Մարմաշենի վանքային համալիրից մոտ 1 կմ դեպի հարավ-արևելք, Վահրամաբերդ (Ներքին Ղանլիջա) գյուղի հարևանությամբ:

Վահրամաբերդ անունը, որքան էլ որ զարմանալի է, հայ և օտար աղբյուրներում չի հիշատակվում: Այդ բացը կարելի է պայմանավորել վերջինիս շուրջը ձևավորված քաղաքով, որը կոչվում էր ոչ թե Վահրամաբերդ, այլ Մարմաշեն: Ասվածի վերաբերյալ արժեքավոր տեղեկություն ենք քաղում Գրիգոր Սագիստրոսի (Բջնեցի)՝ Սոսթենես վանահորը գրած նամակի բովանդակությունից. «Ուխտիդ սուրբ եւ մայրաքաղաքիդ Մարմաշինո՞ւ՞»: Իսկ մեկ այլ նամակի մեջ, որն ուղղված էր Սանահինի վանքին, այն ներկայացվում է որպես պարսպապատ քաղաք «...Ձեկեղեցեաց գյարդարումն եւ զկերտութիւն. եւ

1. Գրիգոր Սագիստրոսի Թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 104:

գրդեկաց սքանչելի եւ ամրապատ պարսպօք եւ աշտարակօք արամանեալ, որ եւ ի մահարծանաց ոք այժմ եթէ հայեցի ոչ ի բնաւ Արամեան գտցէ ոք այնպիսի, եւ զբազմութիւն անապատականաց եւ մայրաքաղաքաց յօրինեալ²»:

Սույն վկայություններից հետևում է, որ Վահրամաբերդը եղել է Մարմաշեն քաղաքի (որը հավանաբար ընդգրկել է նաև Մեծ վանքի տարածքը) միջնաբերդը, ինչպես Բջնի բերդը Բջնի քաղաքի համար: Ասվածի վերաբերյալ արժեքավոր տեղեկություն է հաղորդում նաև 1064թ. սելջուկ-թուրքերի կողմից Մարմաշենի գրավումը նկարագրող արաբ հեղինակ Իբն ալ-Ասիրը. «Մելիք շահը և Նիզամ ալ-Մուլքը շարժվեցին դեպի Մարիամ Նիշին, ուր շատ վանականներ ու քահանաներ (հոգևորականներ) կային: Քրիստոնյա թագավորներն ու նրանց ժողովուրդը բարյացակամ էին այս քաղաքի բնակիչների նկատմամբ: Սա մի ամրացված քաղաք էր, որի պարիսպները պատրաստված էին հսկայական պինդ քարերով, որոնք կապարի ու երկաթի միջոցով իրար էին կապված, իսկ նրա մոտ կար մի մեծ գետ:

Նիզամ ալ-Մուլքը պատրաստեց կռվի համար պետք եղած նավերը և այլ բաներ ու կռվի բռնվեց: Կռիվը տևեց գիշեր ու ցերեկ, իսկ նա զինվորներին կռվի էր բերում հերթով: Անհավատները հոգնեցին, և հուսահատությունը պատեց նրանց: Մահմեդականները հասան նրա պարիսպները և աստիճաններ դնելով՝ վեր բարձրացան, քանզի բրիչները բթացան քարի կարծրության պատճառով: Երբ բնակիչները մահմեդականներին պարսպի վրա տեսան, թուլացան ու հուսալքվեցին: Մելիք շահը մտավ քաղաքը Նիզամ ալ-Մուլքի հետ, և նրանք վառեցին ու կործանեցին եկեղեցիները, բնակիչներից շատերին կոտորեցին և շատերը մահմեդականություն ընդունելով՝ մահվանից փրկվեցին³»:

«Աղբյուրների ուշադիր քննությունից երևում է, - գրում է Գ. Մանանդյանը,- որ Ալփասլանի 1064թ. արշավանքը տեղի էր ունեցել, հավանորեն, ո՛չ թե մի ուղղությամբ, այլ երկու ուղղությամբ՝ Աղվանքի վրայով՝ դեպի Կանգարք, Թռեղք ու Ջավախք, և Նախիջևանի վրայով դեպի Սուրմառի ու

2. Սույն տեղում, էջ 141:

* Մարմաշեն քաղաքը և Մառը սխալմամբ նույնացնում է Անի քաղաքի հետ: Տե՛ս Կ. Մ. Մարր, *Ани, Ленинград-Москва, 1934, стр. 26:*

** Մարմաշեն: Մելիքսեթ-Բեկի (Վրաց աղբյուրները Գայաստանի և հայերի մասին, Կ. Ա., Երևան, 1934, 109) կարծիքով «Մարմաշեն» անունն ավելի շուտ առաջացել է «Մարիամաշեն», քան «Մարմարաշեն» անունից: Գավելենք, որ Մելիքսեթ-Բեկի վերոհիշյալ տեսակետը քննություն չի կարող բռնել, քանի որ «Մարմաշեն» անունն ավելի վաղ, ինչպես ժամանակին նկատել է Գ. Ալիշանը (Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 147), նախքան «Ալփիսազաց և Գայոց» թագուհի Մարիամի Մարմաշենի վանքում իրականացրած վերանորոգչական աշխատանքները, Կաթողիկե եկեղեցու շինարարական արձանագրության մեջ կիրառում է Վահրամ Պահլավունին: Տե՛ս Կ. Մ. Օրբելու, *Надписи Мармашена, Петроград, 1914, стр. 1:*

3. Իբն ալ-Ասիր, Արաբական աղբյուրներ, Բ: Թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 218:

Մարմաշին Սևիթշահն ու Նիզամ ալ-Մուլքը, ինչպես տեսանք, արչալիւ էին կենտրոնական Հայաստան և այստեղ գրալիւ էին Մուրմառին, Մարմաշենը և մի քանի այլ ամրություններ, իսկ ինքը Ալիապանը, ըստ երևույթին, մտել էր Լոռի ու Վրաստան Ալվանքի վրայով⁴»։ Ի տարբերություն վանքային համալիրի՝ սելջուկ-թուրքերի կողմից ավերված քաղաքը ավելի ուշ շրջանի հայ և օտար պատմագիրների կողմից այլևս ոչ մի անգամ չի հիշատակվում։ Հավանաբար դա պայմանավորված էր նրանով, որ Մարմաշենը, կորցնելով երբեմնի նշանակությունը, վերածվել էր փոքրիկ ավանի կամ գյուղի։ Այդ են վկայում նաև մոնղոլների կողմից Հայաստանի նվաճումը նկարագրող, տվյալ դեպքերի ժամանակակից կիրակոս Գանձակեցու⁵ հաղորդած տեղեկությունները, որտեղ պատմիչը գավթիչների կողմից գրաված կարևորագույն քաղաքների, ամրությունների և քնակավայրերի ցանկում չի հիշատակում Մարմաշենը։

Վահրամաքերոջը կամ քաղաքի միջնաբերդը այսօր գտնվում է կիսավեր վիճակում։ Պահպանվել են միայն երբեմնի պարսպի և դեռևս չուսումնասիրված այլ օժանդակ կառույցների առանձին հատվածների ստորին շարվածքները, որոնց բարձրությունը տեղ-տեղ հասնում է 1,5 մետրի։

Վահրամաքերոջի մերօրյա պատկերը ոչ թե պատերազմների, այլ պատմական տարրեր ժամանակներում մահնդական գանձան ցեղերի կողմից իրականացված վանդալիզմի արդյունք է. «Ի վերին կողմն գեղջս, է բերդն Վահրամաշեն կառուցեալ ՚ի վերայ քլրակի մեծամեծ կրազանգ վիժօք, զոր քանդեալ Հագարացիք գնիւթսն ՚ի կիր արկեալ են ՚ի շինուի տանց եւ բերդից»⁶։

Վերին և Ներքին Ղանլիջանների միջև ընկած հարթավայրն ու ձորեզերքն առաջին անգամ լուրջ ուսումնասիրության է ենթարկվում ճարտարապետ Թ. Թորամանյանի կողմից. «Գրեթե երկու գյուղերի մեջտեղ, արևելյան բարձունքների վրա և թե ավելի առաջ, դեպի հարթավայրերը կգտնվին բազմաթիվ նախաքրիստոնեական պատերի և հիմքերի մնացորդներ։ Այս բարձունքների վրա, ձորեզերեն մի քիչ խոր, բնական ժայռի վրա փորագրված կա մի բևեռագիր արձանագրություն, որուն մեջ բևեռագրագետներ կարդում են շրջանի և թե այն տեղերը գոյություն ունեցող քաղաքի անունները⁷»։

«Բևեռագրի տեղից ճանապարհը շարունակելով, գրում է ճարտարապետ Թ. Թորամանյանը, -կիսանդիպինք մի ավերակ բերդի, որուն ավանդաբար

4. Գ. Մանանդյան, Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 3, Ե, 1952, էջ 58։
* 1225թ. Վահրամ Պահլավունու թոռներ Գրիգոր արքեպիսկոպոսը և նրա եղբայր խարիվ Մագիստրոսը վերստին նորոգում են մենաստանի ավերված շինությունները։ Տես Ս. Ա. Օրբեևս, նշվ. աշխ., էջ 2-3։

5. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1961։

6. Ս. Չալալեանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, հ. Ա., Տիֆլիս, 1842, էջ 225։

7. Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, ՄՄՄԼԻ, էջ 39։

Վահրամաշենն են ասում իսլավական շենքի կրաշաղպիով կազմությունը և շինության համար գործածված հրաքիսային տուֆ քարերը ապացույց են, որ քրիստոնեական շրջանի շինություն է և, հավանորեն, Քաղաատունի շրջանի Վահրամ Պահլավունիի սեփական ամրոցը: Քայց կասկած չկա, որ Վահրամ Պահլավունին ոչ թե ինքն է շինել այդ բերդը, այլ նորը շինել է նախապես գոյություն ունեցող նախաքրիստոնեական բերդի տեղում»⁸ Իսկ մեկ այլ տեղ, քննության ենթարկելով բերդի առանձնահատկությունները, հաղորդում է հետևյալը. «Բերդի մեջ երևացող ապարանքի մեկ մասի և շրջապատ պարիսպի հիմնըը հնագույն են: Նաև քարծր քլուրի լանջերուն վրա երևում են ժայռաշեն, առանց շաղախի կիկլոպյան պատերի հիմեր: Հավանական, ուրարտական շրջանից, ոչ միայն բերդի գագաթին եղել է տոհմապետական ամրոց, այլև բերդակիր սարի ներքև փորված էր մի խոր քարայր, որուն դուռը գտնվում է բերդի ուղիղ հյուսիսային կողմը, ստորոտում հեղեղից գոյացած մի ծորակի մեջ»⁹: Թ. Թորամանյանի հիշատակած տոհմապետական ամրոցի ուրարտական ժամանակաշրջանով քվազրելը հակասում է Վանի թագավորության արքա Արգիշթի I-ի Վահրամաբերդի հարևանությանը գտնվող ժայռի վրա թողած 5-տողանոց սեպագիր արձանագրության բովանդակությանը. «Էսայդյան մեծությանը Արգիշթեն ասում է. գրավեցի Երիախեն (գեղի) երկիրը, գրավեցի Իրդահնու (քաղաքը), <կտրում էի> մինչև Իշկուգուլու (երկիրը)¹⁰»: Սույն արձանագրությունից կարելի է հետևել, որ Վահրամաբերդի տարածքը բնակեցված է եղել դեռևս նախաուրարտական ժամանակաշրջանում: Դա է փաստում նաև Ս. Սաղումյանի հետևյալ վկայությունը. «Մ.թ.ա. III հազարամյակի սկզբից Հայկական լեռնաշխարհում երևան եկած խոշոր որձաքարերով, առանց շաղախի պարիսպներով առաջին բերդշեններից մեկը հիմնադրվել է Մարմաշենի վանքից փոքր-ինչ արևելք բնական բարձունքի վրա: Կիկլոպյան այս ամրոցից եւ մերձակա դամբարաններից հայտնաբերվել են մ.թ.ա. III-ի հազարամյակների մշակույթի բազմապիսի նյութեր»¹¹: Միաժամանակ նաև, հավելենք, որ նախնադարյան բերդ-շենի տարածքում, բնեռագիր արձանագրությունից բացի, պահպանվել են նաև ժայռի մակերեսին փորված փոսիկներ (հավանաբար վերջիններիս ունեցել են պաշտամունքային նշանակություն), որոնք, ըստ երևույթին, ժայռի վրա կարող էին հայտնվել ավելի վաղ, քան ուրարտական սեպագիրը:

«Հաւանական է, ասում են բնեռագետները,-գրում է Ն. Զ. Նիկողոսյանը,- որ Երիախի երկիրը գտնուէր դաշտի վրայ, իսկ Իրտինուինի քաղաքը

8. Նույն տեղում, էջ 315:

9. Նույն տեղում, էջ 39:

10. Արձանագրության վերծանությունն ու մեկնաբանությունը կատարել է Գ. Գ. Կարազոյցյանը: Տե՛ս Ս. Սաղումյան, Մարմաշենի վանքը, Վաղարշապատ, 1998, էջ 4:

11. Նույն տեղում, էջ 4:

այժմեան Ղանլիճու տեղը, որտեղ բլրի վրայ կան հին շենքերի մնացորդներ: Այս կետը ռազմական տեսակետից շատ նշանաւոր էր ինչպէս որ այժմս է: Այստեղից երկու ճանապարհ է բացուում. մէկը տանում է դէպի բարձր Չայոց լեռները այժմեան Ախալքալակի և Ախալցխայի վրայով: Թէև այս ուղին շատ դժուարագնաց է, բայց բնական ճանապարհ է, որ տանում է դէպի Չիւսիսային Կովկաս: Բնական է, որ Արգիշտու նման աշխարհակալ թագաւորի համար Աղէքսանդրապօլի հիւսիսային դռները շատ կը հետաքրքրէին նրան: Արգիշտին տիրելով պատերազմական այս նշանաւոր կետին, իւր ձեռքում կունենար Փոքր Կովկասի բոլոր անցքերը¹²»: Չարկ է նշել, որ Իրդաինու քաղաքի և Ղանլիճայի բերդի (Վահրամաբերդ) նույնացումը օրինաչափ է, քանի որ բնական ժայռի վրա փորագրված սեպագիր արձանագրութեան հարևանութեամբ լինելուց բացի՝ հիշյալ տարածքի միակ հնագույն ամրութիւնն է:

Վահրամաբերդը կամ Սարմաշեն քաղաքի միջնաբերդը երեք կողմից շրջապատված է բնականից անմատչելի քարափներով, իսկ հարավից նեղ պարանոցով միացած է ծորալանջի հիմքին:

«Բերդի մուտքը,- գրում է Թ. Թորամանյանը,-գրեթէ հարավային կողմի վրա կգտնվի, դռան երկու կողմը շինված է եղել հսկայական բուրգեր՝ կիսաբլուրակ ձևով, որոնց այժմ փլատակներն ու հիմները կերևան. . . Բերդը նեղ ու երկար ձև ունի՝ հարավից դեպի հյուսիս երկարած. մեզը ամբողջովին բնակութեան համար շենքեր են շինված, որոնց այժմ հիմները միայն որոշակի մնացել են. եթէ մի փոքր մաքրվի փլատակներից և կուտակված հող ու ավազներից, հնարավոր է կազմել ամբողջ բերդի հատակագիծը մեզի շինութիւններով միասին: Ուրիշ կողմերի վրա, բացի գլխավոր մեծ մուտքից, դուռ ունեցե՞ր է թէ ոչ հայտնի չէ. քննութիւն եթէ կատարվի թերևս հայտնի լինի. . . Արևմտյան և հյուսիսային լանջերը գրեթէ միանգամայն աններձեռնալի են: Բերդակիր մեծ բլուրի արևմտյան կողմը, որ հեղեղատի կամ փոքր ծորի նմանութիւն ունի, նախորդ այցելութեան ժամանակ տեսել էի այս հեղեղատի ծայրում մի արվեստական մուտքի բերան, կամ մի անցք, որ գնում էր ուղիղ դեպի բերդի տակը: Դեռ այն ժամանակ ինձ հնար չեղավ այս անցքի խորքը մտնել, որովհետև թե՛ ներսի փլվածքներից և թե՛ դրսի հեղեղատներից լցվել էին քարեր և հող, և նասամբ խափանել էին մուտքը. սակայն երևում էին մուտքի շինութեան համար երկու կողմի վրա կանգնված քարեր և կանգնված քարերի վրա ծածկված մեծամեծ սալաքարեր: Բայց այժմ, ինչպէս կերևի հեղեղատի մշտապես հոսումից բլուրովին փակված է մուտքի բերանը և տեղը հազիվ թէ հայտնի է: Նախկին այցելութեան ժամանակ գյուղացի ծերեր հավաստում էին, որ այդ մուտքի հեղեղատի մոտերը ևս կա եղեր մի ավելի ընդարձակ բնեռագիր

12 Ե. Զ. Նիկողոսեան, Շիրակի գիւղական կեանքից, «Արարատ», 1904, N Թ, էջ 790-791:

արձանագրություն, սակայն անհայտացել էր դեռ այն ժամանակ, և չգիտեին թե ուր մնաց և ի՞նչ եղավ»:¹³ Մեր կարծիքով, թ. Թորամանյանի հիշատակած Վահրամաբերդ ամրոցի արևմտյան կողմից բացվող մուտքի բերանի նկարագրությունը վերաբերում է հնագույն կամ միջնադարյան բերդի գաղտնուղուն: Առաջին հայացքից վիճահարույց թվացող այս ենթադրությունը, ամրոցից Ախուրյան գետի ներկայիս հունի մոտ 1-1,5 կմ հեռավորության վրա գտնվելու պայմաններում, անհրատեսական է թվում: Սակայն ամրոցաշինության կանոններից չբխող նման հեռավորությունը թույլ է տալիս ենթադրել, որ նախկին հունը անցել է ամրոցի մոտակայքով, որից, ամենայն հավանականությամբ, սնուցվել է Մարմաշեն քաղաքի պաշտպանության համար նախատեսված Իբն ալ-Ասիրի հիշատակած խրամը:¹⁴ Ամրոցի հյուսիսարևելյան կողմում պահպանվել է սրբատաշ տուֆով շարված կիսակլոր պատի հատված, որը, ըստ երևույթին, կարող է լինել խաչածև հատակագծով փոքրիկ եկեղեցու հարավային արսիդ: Նման ենթադրության օգտին է խոսում ներկայումս այդ հատվածի տեղացիների կողմից սրբացված լինելու իրողությունը:

Պահլավունիների աստվածապաշտ տոհմի կողմից կառուցված ամրոցներն (Ամբերդ, Բջնի) անմասն չեն եղել եկեղեցիներից, ուստի կարծում ենք, որ Վահրամաբերդը ևս պետք է ունեցած լիներ իր հոգևոր կառույցը՝ եկեղեցին:

Այսպիսով, կարող ենք նշել, որ դեռևս Զ. ա. III հազարամյակից գոյություն ունեցող և Արգիշթի I արքայի կողմից Իրդահնու քաղաք կոչվող բերդի՝ որպես կարևորագույն հանգույցներ և խճուղիներ վերահսկող երբեմնի ռազմապաշտպանական ամրության նշանակությունը X դարի վերջից կրկին կարևորվեց: Դրա վառ ապացույցը նախկին բերդ-չենի տեղում խոշորագույն ռազմագետ իշխանաց իշխան Վահրամ Պահլավունու կողմից կառուցված Վահրամաբերդ ամրոցն էր (որի շուրջը հետագայում ձևավորվեց ժամանակի ծաղկուն քաղաքներից մեկը Մարմաշենը): Վերջինս հնագույն բերդի գործառույթներից բացի, պետք է հյուսիս-արևելքից կասեցներ թշնամական բանակների առաջխաղացումը դեպի Անի մայրաքաղաք և ապահովեր Մարմաշենի վանքային համալիրի անվտանգությունը: Մեր կարծիքով, Վահրամաբերդի կառուցումը, շատ չնչին տարբերությամբ, իրականացվել է Մարմաշենի վանքային համալիրի կառուցմանը (988-1029թթ.)¹⁵ զուգընթաց:

13. Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. II, Երևան, 1948, էջ 236-237:

14. Իբն ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 218:

15. И. А. Орбел, նշվ. աշխ., էջ 1:

Վահրամաբերդի՝ որպես Սարմաշեն քաղաքի միջնաբերդի, ինչպես նաև բուն քաղաքի պատմության վերհանման գործում կարևորում ենք հնավայրի (ամրոց-դղակի)՝ ապագայում իրականացվելիք հնագիտական պեղումները, որոնց արդյունքում ստացված տվյալները հնարավորություն կընձեռեն մեզ պարզելու ոչ միայն հնագույն շենքերի տիպաբանությունն ու նշանակությունը, այլև ամբողջացնելու գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկությունները:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881:
2. Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղէքսանդրապոլ, 1910:
3. Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. I, Երևան, MCMXLII:
4. Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. II, Երևան, 1948:
5. Իբն ալ-Ասիր, Սրաբական աղբյուրներ, Բ: Թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981:
6. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1961:
7. Հ. Սանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. III, Երևան, 1952:
8. Լ. Մելիքսեթ-Քեչ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934:
9. Ն. Մ. Նիկողոսեան, Շիրակի գիւղական կեանքից.-«Արարատ», 1904, N Թ:
10. Ս. Զալալեանց, ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, հ. Ա., Տփլիս, 1842:
11. Ս. Սաղումյան, Սարմաշենի վանք, էջմիածին, 1998:
12. Н. Я. Марр, Ани, Ленинград-Москва, 1934.
13. И. А. Орбели, Надписи Мармашена, Петроград, 1914.